

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ

2025-2027

ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ

ԵՎ 2025

ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏ

1. ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԹԻՐԱԽՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

«Վ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի գործունեությունը դրսևորվում է երկու հիմնական ուղղություններով՝

1) բողոքի և սեփական նախաձեռնությամբ հարցի քննարկման ընթացակարգերով դիմում-բողոքների քննարկում, այսինքն՝ մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության խնդիրների ուսումնասիրություն անհատական մակարդակում.

2) մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության համակարգային խնդիրների վերհանում ու դրանց լուծման համար անհրաժեշտ ուղիների նախանշում, ինչը նաև կանխարգելիչ նպատակ է հետապնդում՝ բացառելու ապագայում իրավունքների խախտման նմանատիպ դեպքերը:

Անհատական դեպքերի վերաբերյալ քննարկումներն իրականացվում են «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքով նախատեսված երկու ուղղությամբ՝ բողոքի և սեփական նախաձեռնությամբ հարցի քննարկման ընթացակարգերով: Այս առումով, անհրաժեշտ է արձանագրել, որ Պաշտպանին ներկայացվող դիմումների ու բողոքների թվի աճը կրում է շարունակական բնույթ:

Պաշտպանի աշխատակազմի գործունեության երկրորդ հիմնարար ուղղությունը համակարգային խնդիրների վերհանումն ու դրանց լուծման համար անհրաժեշտ ուղիների նախանշումն է: Հարկ է ընդգծել, որ անհատական դիմումներից բացի, համակարգային խնդիրների վերհանման աղբյուր են նաև Պաշտպանի կոնվենցիոն մանդատների շրջանակում մշտադիտարկման արդյունքները: Ոլորտային մշտադիտարկումների շնորհիվ պարբերաբար արձանագրվում են օրենսդրական կամ այլ ինստիտուցիոնալ մոտեցում ենթադրող համակարգային խնդիրներ:

Անհատական դիմումների քննարկման, մշտադիտարկումների և Պաշտպանին օրենքով վերապահված այլ գործառույթների իրականացման արդյունքներով վեր հանված խնդիրների հասցեագրումը հաճախ առաջ է բերում ինստիտուցիոնալ մոտեցում ցուցաբերելու անհրաժեշտություն: Այդ առումով, Պաշտպանի գործառույթները կարելի է դասակարգել հետևյալ հիմնական ուղղությունների՝

1. օրենքների և ենթաօրենսդրական ակտերի նախագծերի մշակում.

2. օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության նախագահի հրամանագրերի և կարգադրությունների, Կառավարության և վարչապետի որոշումների, ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի Սահմանադրության 2-րդ գլխի (Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները) դրույթներին

համապատասխանության հարցերով Սահմանադրական դատարան դիմումի հասցեագրում.

3. մինչև մարդու իրավունքներին և ազատություններին վերաբերող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի ընդունումը դրանց վերաբերյալ իրավասու մարմին գրավոր կարծիքների տրամադրում.

4. Սահմանադրական դատարանում քննվող՝ Սահմանադրության 2-րդ գլխի (Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները) դրույթներին հակասությանը վերաբերող դիմումների վերաբերյալ հատուկ դիրքորոշումների (*amicus brief*) ներկայացում.

5. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերում նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարչական դատարան դիմումների ներկայացում:

Այս հիմնական ուղղություններով աշխատանքն իրականացվում է Պաշտպանի՝ նորմատիվ իրավական ակտերի կատարելագործմանը նպաստելու սահմանադրական գործառույթի շրջանակում: Սա թույլ է տալիս ոչ միայն նպաստել ներպետական օրենսդրության զարգացմանը, այլև ձեռնարկել անհատական դիմում-բողոքներից, մշտադիտարկումներից և այլ աղբյուրներից վեր հանված խնդիրների լուծմանն ուղղված քայլեր:

Վերոգրյալից բացի, հարկ է նշել, որ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքով Պաշտպանին վերապահված են նաև կոնվենցիոն կարգավիճակներ: Այսպես.

1. Պաշտպանին է վերապահված «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ» ՄԱԿ-ի՝ 1984 թվականի կոնվենցիայի 2002 թվականի դեկտեմբերի 18-ին ընդունած կամընտիր արձանագրությամբ սահմանված կանխարգելման ազգային մեխանիզմի կարգավիճակը,

2. Պաշտպանն իրականացնում է նաև «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի՝ 1989 թվականի նոյեմբերի 20-ին ընդունված կոնվենցիայի դրույթների կիրառության մշտադիտարկում, ինչպես նաև երեխաների իրավունքների խախտումների կանխարգելում և պաշտպանություն,

3. Պաշտպանն իրականացնում է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի՝ 2006 թվականի դեկտեմբերի 13-ին ընդունված կոնվենցիայի դրույթների կիրառության մշտադիտարկում, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների խախտումների կանխարգելում և պաշտպանություն:

Նշված կոնվենցիոն կարգավիճակներից բխող գործունեությունը ենթադրում է նաև մշտադիտարկումների իրականացում, որոնց արդյունքում արձանագրվում են նաև օրենսդրական կամ այլ ինստիտուցիոնալ մոտեցում ենթադրող համակարգային խնդիրներ:

Պաշտպանի աշխատակազմի գործունեության կարևոր ուղղություններից են նաև՝

1) Պաշտպանի տարեկան հաղորդման և Պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի գործունեության վերաբերյալ տարեկան զեկույցների, ինչպես նաև հրապարակային զեկույցների նախագծերի մշակումը.

2) անձանց իրենց իրավունքների և ազատությունների, ինչպես նաև դրանց արդյունավետ պաշտպանության հնարավորությունների վերաբերյալ իրավաբանական խորհրդատվության տրամադրումը.

3) արագ արձագանքման շրջանակներում անհետաձգելի այցերի իրականացումը, այդ թվում՝ ազատությունից զրկման վայրեր, ներառյալ՝ ձերբակալված և կալանավորված անձանց պահելու վայրեր, քրեակատարողական հիմնարկներ, կայազորային կարգապահական մեկուսարաններ, հոգեբուժական կազմակերպություններ, ազատությունից զրկված անձանց տեղափոխելու համար նախատեսված տրանսպորտային միջոցներ և այլն.

4) «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքով նախատեսված դեպքերում Պաշտպանի՝ դատարան ներկայացվող հայցերի նախապատրաստումը.

5) Հայաստանի դեմ Մարդու իրավունքների եվրոպական դատարան ներկայացված գանգադներով որպես երրորդ կողմ ներգրավման, ինչպես նաև Հայաստանի դեմ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարման փուլում Պաշտպանի ներգրավման գործընթացին մասնակցությունը:

Մարդու իրավունքների պաշտպանի՝ Սահմանադրությամբ և «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքով վերապահված, ինչպես նաև նախատեսվող նոր լիազորությունների լիարժեք ու արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակով 2025-2027 թվականներին նախատեսվում է Պաշտպանի աշխատակազմում կատարել կառուցվածքային փոփոխություններ:

2016 թվականի հունվարի 1-ից պաշտոնապես ուժի մեջ մտան կայուն զարգացման 2030 օրակարգում ներառված՝ **Միավորված ազգերի կազմակերպության կայուն զարգացման 17 նպատակները**, որոնք ընդունվեցին աշխարհի երկրների առաջնորդների 2015թ. սեպտեմբերի ՄԱԿ-ի պատմական գագաթնաժողովի ժամանակ: Այդ նպատակները, ի թիվս այլնի, ներառում են կայացած, ներառական և կայուն տնտեսական աճի, լիարժեք և արտադրողական զբաղվածության և բոլորի համար արժանապատիվ աշխատանքի խթանումը (8-րդ նպատակ), բոլորի համար ներառական ու

համապատասխան որակյալ կրթությունը և ողջ կյանքի ընթացքում ուսման հնարավորությունների խթանումը (4-րդ նպատակ), ջրի ու սանիտարական պայմանների հասանելիությունը և դրանց կայուն ձևով կառավարումը (6-րդ նպատակ), կանանց և տղամարդկանց միջև հավասարության ապահովումը (5-րդ նպատակ) և այլն:

Հաշվի առնելով, որ կայուն զարգացման նպատակներն ուղղված են մարդու հիմնական իրավունքների և ազատությունների երաշխավորմանը հասարակական կյանքի տարբեր ոլորտներում՝ դրանք բովանդակային առումով ներառվում են նաև Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի գործունեության շրջանակներում՝ հիմք ընդունելով վերջինիս լայն մանդատը, ինչպես նաև կոնվենցիոն կարգավիճակները: Ավելին, Պաշտպանի՝ երկրում մարդու իրավունքների և ազատությունների վիճակը գնահատող տարեկան հաղորդումներն ու զեկույցները հանդես են գալիս իբրև կայուն զարգացման նպատակների իրագործման գնահատման օբյեկտիվ ցուցիչներ:

2. ԾԱԽ ՍԱՅԻՆ ԳԵ ՐԱԿԱՅՈՒԹ ՅՈՒՆ Ե ԸԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

Գերակա ծախսային ուղղությունները ՄԺԾԾ ժամանակահատվածի համար՝ (ըստ գերակայությունների նվազման)	Հիմնավորումներ
Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության ծառայությունների տրամադրում	Նշված ծրագրերի միջոցով ապահովվում է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի բնականոն գործունեությունը
ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի տեխնիկական հագեցվածության բարելավում	

3. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

3.1. Պարտադիր և հայեցողական ծախսերը

1) Պարտադիր ծախսերին դասվող միջոցառումներ:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից իրականացվում են **պարտադիր ծախսերին դասվող հետևյալ 2 միջոցառումները՝**

- 1. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության ծառայությունների տրամադրում,**

2. ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի տեխնիկական հագեցվածության բարելավում:

Դասիչը		Միջոցառման անվանումը	Պարտադիր կամ հայեցողական պարտավորությունների շրջանակը ¹	Պարտադիր պարտավորության շրջանակներում գործադիր մարմնի հայեցողական իրավասությունների շրջանակները	Պարտադիր կամ հայեցողական պարտավորությունը սահմանող օրենսդրական հիմքերը
Ծրագիր	Միջոցառում				
Պարտադիր ծախսերին դասվող միջոցառումներ, այդ թվում՝					
1060	11001	Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության ծառայությունների տրամադրում	Մարդու իրավունքների պաշտպանության հարցերին վերաբերող բողոքների քննարկում, որոշումների ընդունում, մշտադիտարկում, մարդու իրավունքների վերաբերելի խնդիրների լուսաբանում և հանրային իրազեկում, օրենսդրության կատարելագործում, միջազգային համագործակցություն և այլն:	Աշխատակազմի հաստիքների առավելագույն թիվը, Էներգետիկ, կոմունալ, կապի գծով ծախսեր, գործուղումների գծով ծախսեր	«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 8-րդ հոդված
	31001	ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի տեխնիկական հագեցվածության բարելավում	ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատանքային պայմանների բարելավման համար վարչական սարքավորումների ձեռքբերում		«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 8-րդ հոդված

3.2. Գոյություն ունեցող ծախսային պարտավորությունները

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի՝ «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով հաստատված և 2025-2027 թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրով և 2025 թվականի բյուջետային հայտով ներկայացվող ծախսային պարտավորություններն են 1060 «Մարդու իրավունքների պաշտպանություն» ծրագրի շրջանակում իրականացվող 11001 «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության ծառայությունների տրամադրում» և 31001 «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի տեխնիկական հագեցվածության բարելավում» միջոցառումները:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից իրականացվող 1060 «Մարդու իրավունքների պաշտպանություն» ծրագրի շրջանակում գոյություն ունեցող ծախսային պարտավորությունների գծով ծախսային խնայողությունների վերաբերյալ առաջարկություններ չկան:

3.3. ՆՈՐ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից 2025-2027 թվականների համար նոր նախաձեռնություններ չեն ներկայացվել:

4. ՈՉ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԱՐԲՅՈՒՐՆԵՐԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը ոչ բյուջերային աղբյուրներից սպասվող եկամուտներ չունի:

5. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌՆՉՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ/ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմն ունի 5 մարզային ստորաբաժանումներ՝ Գյումրի, Գավառ, Կապան, Վանաձոր և Իջևան քաղաքներում:

6. ՄԻՋՈՒՆՈՐՏԱՅԻՆ (ԽԱՉՎՈՂ) ԲՆՈՒՅԹԻ ԱՌԱՆՁԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ/ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

7. ԱՐՏԱՔԻՆ ԱՐԲՅՈՒՐՆԵՐԻՑ՝ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԽՈՂՈՎԱԿՆԵՐՈՎ ՍՏԱՑՎՈՂ ՎԱՐԿԵՐԻ ԵՎ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾՐԱԳՐԵՐԸ/ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Արտաքին աղբյուրներից՝ պետական բյուջե ստացվող վարկերի և դրամաշնորհների հաշվին իրականացվելիք ծրագրեր/միջոցառումներ չեն ներկայացվել/նախատեսվել:

8. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը «Մարդու իրավունքների պաշտպանություն» ծրագրով 2025-2027 թվականների համար բյուջերային աղբյուրներից ներկայացրել է հայտ՝ համապատասխանաբար 587082,5 հազար, 587082,5 հազար և 587931,7 հազար դրամի չափով:

9. ՀԱՅՏԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՌԻՍԿԵՐԸ

2025-2027 թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրով ներկայացվել են ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի բնականոն գործունեության ապահովման հետ կապված ծախսերը, որոնք հաշվարկվել են նախորդ տարիներին կատարված փաստացի ծախսերին և շարունակական ծախսերի գծով հաստատված նորմատիվներին համապատասխան:

Ռիսկի նկարագրությունը	Երևույթի հանդես գալու հավանականությունը ²	Հնարավոր ազդեցությունը նպատակների և արդյունքային ցուցանիշների վրա	Ռիսկի կանխման/ հաղթահարման հնարավոր ուղիները
Գրավոր և բանավոր դիմում-բողոքների շարունակական աճ	2	Առկա ռեսուրսներով դրական լուծում ստացած գործերի քանակական ցուցանիշների և որակի անկում:	Աշխատակազմի կարողությունների հզորացում, որը թույլ կտա գործնականում իրականացնել մարդու իրավունքների առավել արդյունավետ պաշտպանություն՝ ապահովելով նրանց իրավունքների ենթադրյալ խախտումների դեպքում Պաշտպանի աջակցությունը ստանալու հնարավորությունը:

² Ներկայացնել 1-5 թվանշանով, որտեղ 1 թվանշանը ենթադրում է առավել բարձր հավանականություն

Հավելված N 12

ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԱՅԻՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
(հակիրճ շարադրանք)¹

1. ՈԼՈՐՏԸ

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը՝ որպես անկախ սահմանադրական ինստիտուտ, հետևում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց, իսկ օրենքով սահմանված դեպքերում՝ նաև կազմակերպությունների կողմից մարդու իրավունքների և ազատությունների պահպանմանը, նպաստում է խախտված իրավունքների և ազատությունների վերականգնմանը, իրավունքներին ու ազատություններին առնչվող նորմատիվ իրավական ակտերի կատարելագործմանը:

2. ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԹԻՐԱԽՆԵՐԸ

Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության թիրախային առաջնահերթություններն են, մասնավորապես, խոշտանգման, անմարդկային ու արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի դեմ պայքարի, երեխաների, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության, ընտանեկան բռնության դեմ պայքարի ու կանանց իրավունքների խթանման, խտրականության դեմ պայքարի, հավաքների ազատության և կարծիքի արտահայտման ազատության երաշխավորման ոլորտներում, քրեական արդարադատության համակարգում մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված աշխատանքները, ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպանության համակարգի ամրապնդմանն ուղղված միջազգային համագործակցության զարգացումն այլ երկրների օմբուդսմանական հաստատությունների, մարդու իրավունքների պաշտպանության միջազգային ու տարածաշրջանային կառույցների հետ:

Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության այս հիմնական թիրախների ապահովմանն է ուղղված Աշխատակազմի գործունեությունը՝ հետևյալ հիմնական ուղղություններով.

- անհատական բողոքների և դիմումների քննարկում, մշտադիտարկման այցեր, դրանց արդյունքներով համակարգային խնդիրների վերահանում,
- մարդու իրավունքներին և ազատություններին վերաբերող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ իրավասու մարմին կարծիքների տրամադրում,

¹ Ոչ որոպ ինքստլսքսկսնու թ յ սն ողջ հսնտտոշսքստրսնքը չսքսք է գերսզսնցի 6 էջի սսնսնները:

- մարդու իրավունքների ու ազատությունների ապահովմանն ուղղված օրենսդրական նախագծերի մշակում,
- օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության նախագահի հրամանագրերի և կարգադրությունների, Կառավարության և վարչապետի որոշումների, ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի Սահմանադրության 2-րդ գլխի դրույթներին համապատասխանության հարցերով Սահմանադրական դատարան դիմումների հասցեագրում,
- Սահմանադրական դատարանում քննվող՝ Սահմանադրության 2-րդ գլխի դրույթներին հակասությանը վերաբերող դիմումների վերաբերյալ հատուկ կարծիքների ներկայացում,
- մարդու իրավունքների կրթությանն ու իրազեկմանն ուղղված շարունակական միջոցառումների անցկացում,
- մարդու իրավունքների մանդատ ունեցող միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների հետ աշխատանք՝ միտված Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանության իրավիճակի ներկայացմանն ու բարելավմանը:

3. ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
--

ՄԺԾԾ ժամանակահատվածում հիմնական ծախսային գերակայություններն են.

1. *Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության ծառայությունների տրամադրում:*
2. *ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի տեխնիկական հագեցվածության բարելավում:*

Նշված ծրագրերի միջոցով ապահովվում է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի բնականոն գործունեությունը:

ՄԺԾԾ ժամանակահատվածում իրականացվում են պարտադիր ծախսային ծրագրեր:

4. ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

Ստորև ներկայացվում է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի՝ 2025-2027 թթ. Յուրաքանչյուր տարվա համար նախատեսված չափաքանակները.

2025 թվականի համար՝ 587082,5 հազ. դրամ

2026 թվականի համար՝ 587082,5 հազ. դրամ

2027 թվականի համար՝ 587931,7 հազ. դրամ

Հավելված N 13

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ
/ԱՆՁՆԱԳԻՐ/

Մարդու իրավունքների պաշտպանություն

(Բյուջետային ծրագրի անվանումը)

1. ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳՐԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ

1.1 ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝
<i>Մարդու իրավունքների պաշտպանություն</i>
1.2 ԾՐԱԳՐԻ ԴԱՍԻՉԸ՝
1060
1.3 ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆԸ (ԲԳԿ)՝
<i>ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ</i>
1.4 ԾՐԱԳՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԿԻՉԲԸ՝
Ավելի քան 5 տարի
1.5 ԾՐԱԳՐԻ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՎԱՐՏԸ՝
<i>Շարունակական</i>
1.6 ԾՐԱԳՐԻ ՆԱԽՈՐԴ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ՝

2. ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

2.1 ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ՝	
<i>Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանություն</i>	
2.2 ԾՐԱԳՐԻ ՀԻՄՔԵՐԸ՝	
Ծրագրի իրավական հիմքերը	Նկարագրությունը
«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 8-րդ հոդված	Մարդու իրավունքների պաշտպանության հարցերին վերաբերող բողոքների քննարկում, որոշումների ընդունում, մշտադիտարկում, մարդու իրավունքներին վերաբերելի խնդիրների լուսաբանում և հանրային իրազեկում, օրենսդրության կատարելագործում, միջազգային համագործակցություն և այլն:
....	
2.3 ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ (ԲԳԿ) ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ՝	
«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենք	

2.4 ԾՐԱԳՐԻ ԹԻՐԱԽԱՅԻՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԸ ԵՎ ՄԱՏՈՒՑՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝

Ծրագրի թիրախային շահառուներն են Պաշտպանին դիմած յուրաքանչյուր ֆիզիկական և իրավաբանական անձ:

Պաշտպանի աշխատակազմի գործունեության հիմնական ուղղություններն են՝

- բողոքի և սեփական նախաձեռնությամբ հարցի քննարկման ընթացակարգերով դիմում-բողոքների քննարկումը,
- մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության հնարավորությունների ու ընթացակարգերի մատչելիության ապահովումն ու ընդլայնումը,
- մարդու իրավունքներին և հիմնարար ազատություններին առնչվող իրավական ակտերի կատարելագործման և ՀՀ օրենսդրությունը միջազգային իրավունքի համընդհանուր սկզբունքներին ու նորմերին հնարավորինս ներդաշնակեցնելու ուղղությամբ աշխատանքների շարունակական ապահովումը,
- մարդու իրավունքներին և ազատություններին վերաբերող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի ուսումնասիրությունը, օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված ժամկետներում դրանց վերաբերյալ գրավոր կարծիք ներկայացնելը,
- մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ապահովման ոլորտում միջազգային համագործակցության զարգացմանը նպաստելը,
- մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության, ինչպես նաև դրանց իրազեկման կառուցակարգերի արդյունավետության բարձրացմանը նպաստելը,
- Պաշտպանի գործունեության անհրաժեշտ թափանցիկության ու հաշվետվողականության ապահովումը, այդ մասին տեղեկատվության պարբերական տարածումը,
- «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիայի» կամընտրի արձանագրությամբ սահմանված կանխարգելման անկախ ազգային մեխանիզմի գործառույթների շարունակական իրականացումը,
- «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի 1989 թվականի նոյեմբերի 20-ին ընդունված կոնվենցիայի դրույթների կիրառության մշտադիտարկումը, ինչպես նաև երեխաների իրավունքների խախտումների կանխարգելումը և պաշտպանությունը,
- «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի՝ 2006 թվականի դեկտեմբերի 13-ին ընդունված կոնվենցիայի դրույթների կիրառության մշտադիտարկումը, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների խախտումների կանխարգելումը և պաշտպանությունը,
- մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խախտման պատճառների բացահայտման և լուծումների նախանշման նպատակով պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ պարզաճ համագործակցության արդյունավետ կառուցակարգերի կիրառումը,
- մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների հնարավոր խախտումների կանխարգելման նպատակով մշտադիտարկումների և պարբերական այցելությունների իրականացումը,
- հանրային ծառայության ոլորտում, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պատվիրակված լիազորություններն իրականացնող կազմակերպությունների կողմից անձանց իրավունքների խախտումների կանխարգելումը և պաշտպանությունը,
- Պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդմամբ օրենսդրական կամ այլ բնույթի միջոցառումների վերաբերյալ առաջարկների ներկայացումը:

2.5 ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ՝

Ծրագրի միջոցառման	Ծրագրի միջոցառման անվանումը	Ծրագրի միջոցառման նկարագրությունը	Ծրագրի միջոցառման հիմնական շահառուները
-------------------	-----------------------------	-----------------------------------	--

դասիչը			և փոխհատուցման շրջանակը
11001	Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության ծառայությունների տրամադրում	Մարդու իրավունքների պաշտպանության հարցերին վերաբերող բողոքների քննարկում, որոշումների ընդունում, մշտադիտարկում, մարդու իրավունքներին վերաբերելի խնդիրների լուսաբանում և հանրային իրազեկում, օրենսդրության կատարելագործում, միջազգային համագործակցություն և այլն:	Յուրաքանչյուր ոք («Սահմանադրության 52-րդ հոդ»)
1001	«Վ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի տեխնիկական հագեցվածության բարելավում	«Վ մարդու իրավունքների պաշտպանի աշխատանքային պայմանների բարելավման համար վարչական սարքավորումների ձեռքբերում	«Վ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ
2.6 ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՔՈՒՄ ԴՐՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ԲՆՈՒՅԹԸ			
Միջոցառման անվանումը	Պարտադիր կամ հայեցողական պարտավորությունների շրջանակը	Պարտադիր պարտավորության շրջանակներում գործադիր մարմնի հայեցողական իրավասությունների շրջանակները	Պարտադիր կամ հայեցողական պարտավորությունը սահմանող օրենսդրական հիմքերը
Պարտադիր ծախսերին դասվող միջոցառումներ, այդ թվում՝			
Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության ծառայությունների տրամադրում	Մարդու իրավունքների պաշտպանության հարցերին վերաբերող բողոքների քննարկում, որոշումների ընդունում, մշտադիտարկում, մարդու իրավունքներին վերաբերելի խնդիրների լուսաբանում և հանրային իրազեկում, օրենսդրության կատարելագործում,	Աշխատակազմի հաստիքների առավելագույն թիվը, էներգետիկ, կոմունալ, կապի գծով ծախսեր, գործուղումների գծով ծախսեր	«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» «Վ սահմանադրական օրենքի 8-րդ հոդված

	միջազգային համագործակցություն և այլն:		
ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի տեխնիկական հագեցվածության բարելավում	ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի պայմանների բարելավման համար վարչական սարքավորումների ձեռքբերում		«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 8-րդ հոդված
2.7 ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՂԱՆԱԿԸ (ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ)			

3. ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ (ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ) ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

3.1 ԾՐԱԳՐԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝				
Վերջնական արդյունքի չափորոշիչը		Չափման միավորը		Հղումներ չափորոշիչը նկարագրող մանրամասն աղյուսակին
Մարդու իրավունքների ազգային հաստատությունների համաշխարհային միավորման անկախ հանձնախմբի կողմից Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի հաստատությանը շնորհված ամենաբարձր «A» միջազգային հեղինակավոր կարգավիճակի պահպանում (վերահաստատում)		տարի		Աղյուսակ 1
....				
3.2 ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝				
Միջոցառման դասիչը	Միջոցառման անվանումը	Միջոցառման արդյունքի չափորոշիչը	Չափման միավորը	Հղումներ չափորոշիչը նկարագրող մանրամասն աղյուսակին
11001	Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության	Քանակական	մարդ	Աղյուսակ 2
		Քանակական	%	Աղյուսակ 3
		Որակական	մարդ	Աղյուսակ 4

	ծառայությունների տրամադրում			
31001	«Վ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի տեխնիկական հագեցվածության բարելավում	Քանակական	տարի	
			
....				

4. ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՄԱՆՐԱՄԱՍՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

4.1 Աղյուսակ 1 (Յուրաքանչյուր ինքնուրույն չափորոշիչի համար լրացվում է առանձին աղյուսակ)

Չափորոշիչի նկարագրությունը	
Չափորոշիչի անվանումը (հապավումը)	Մարդու իրավունքների ազգային հաստատությունների համաշխարհային միավորման անկախ հանձնախմբի կողմից Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի հաստատությանը շնորհված ամենաբարձր «A» միջազգային հեղինակավոր կարգավիճակի պահպանում (վերահաստատում)
Կիրառման ոլորտ/տարածքը	Մարդու իրավունքների պաշտպանություն
Սահմանումը	Մարդու իրավունքների ազգային հաստատությունների համաշխարհային միավորման անկախ հանձնախմբի կողմից շնորհվող կարգավիճակ, որը վերանայվում է 5 տարին մեկ անգամ:
Չափման միավորը	տարի
Տեսակ/տիպը	վերջնական արդյունք
Ներկայացման բացվածքը/կառուցվածքը	
Տվյալների ստացումը	
Տվյալների հավաքագրման մեթոդը	Գործունեության գնահատում
Տվյալների հավաքագրման հաճախականությունը կամ ժամկետները	Գնահատման համար ուսումնասիրությունը ներառում է նախորդող 5 տարիների գործունեությունը:

Պատասխանատու միավորը	ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ
Տվյալների ստացման հետ կապված ծախսերի գնահատական	Պարտադիր ծախսեր
Այլ նշումներ	
Ցուցանիշի ելակետային տվյալը	«A» միջազգային հեղինակավոր կարգավիճակ
Հենանիշային (benchmark) ցուցանիշները	
Թիրախային ցուցանիշը	«A» միջազգային հեղինակավոր կարգավիճակի պահպանում (վերահաստատում)
Սահմանափակումները	

Աղյուսակ 2

Չափորոշիչի նկարագրությունը	
Չափորոշիչի անվանումը (հապավումը)	Դիմում-բողոք ներկայացնողների թիվն ըստ իրավական ծառայություն ստացած անձանց
Կիրառման ոլորտ/տարածքը	Մարդու իրավունքների պաշտպանություն
Սահմանումը	Չափորոշիչը հաշվարկվում է Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվող բողոքներում ներառված անձնական տվյալների հիման վրա, բացառությամբ այն դեպքերի, երբ բողոքն անանուն է:
Չափման միավորը	մարդ
Տեսակ/տիպը	միջոցառման արդյունք
Ներկայացման բացվածքը/կառուցվածքը	
Տվյալների ստացումը	
Տվյալների հավաքագրման մեթոդը	Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում գործող «Mulberry» էլեկտրոնային կառավարման համակարգում առկա անհատական աղյուսակներ դաշտում ներառված չափորոշիչներին

	<i>համապարասխան:</i>
Տվյալների հավաքագրման հաճախականությունը կամ ժամկետները	<i>Տվյալները հավաքագրվում են յուրաքանչյուր սրահավող բողոքի հիման վրա:</i>
Պատասխանատու միավորը	<i>ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ</i>
Տվյալների ստացման հետ կապված ծախսերի գնահատական	<i>Պարտադիր ծախսեր</i>
Այլ նշումներ	
Ցուցանիշի ելակետային տվյալը	<i>Նախորդ տարիների դինամիկան</i>
Հենանիշային (benchmark) ցուցանիշները	
Թիրախային ցուցանիշը	<i>Քաղաքացիների իրավունքների առավել արդյունավետ պաշտպանություն</i>
Սահմանափակումները	<i>Պաշտպանի իրավասությանը ոչ վերաբերելի դիմումներ</i>

Աղյուսակ 3

Չափորոշիչի նկարագրությունը	
Չափորոշիչի անվանումը (հապավումը)	<i>Ուսումնասիրված դիմում-բողոքների մեջ դրական լուծում ստացած դիմում-բողոքների քանակը</i>
Կիրառման ոլորտ/տարածքը	<i>Մարդու իրավունքների պաշտպանություն</i>
Սահմանումը	<i>Չափորոշիչի հաշվարկը կատարվում է ելնելով Մարդու իրավունքների</i>

	<i>պաշտպանին հասցեագրված բողոքների վերջնական արդյունքից:</i>
Չափման միավորը	<i>տոկոս</i>
Տեսակ/տիպը	<i>միջոցառման արդյունք</i>
Ներկայացման բացվածքը/կառուցվածքը	<i>Դրական լուծում ստացած դիմում-բողոքների հարաբերությունը ուսումնասիրվածների</i>
Տվյալների ստացումը	
Տվյալների հավաքագրման մեթոդը	<i>Բողոքների ուսումնասիրության արդյունքում ձեռնարկված գործողությունների հիման վրա, ինչպես նաև հենց բողոք ներկայացրած անձից ստացված գրավոր դիմումի հիման վրա:</i>
Տվյալների հավաքագրման հաճախականությունը կամ ժամկետները	<i>Շարունակական, ամենօրյա կտրվածքով</i>
Պատասխանատու միավորը	<i>«Վ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ</i>
Տվյալների ստացման հետ կապված ծախսերի գնահատական	
Այլ նշումներ	
Ցուցանիշի ելակետային տվյալը	<i>Ուսումնասիրված դիմում-բողոքների քանակ</i>
Հենանիշային (benchmark) ցուցանիշները	
Թիրախային ցուցանիշը	<i>Քաղաքացիների իրավունքների առավել արդյունավետ պաշտպանություն</i>
Սահմանափակումները	<i>Պաշտպանի իրավասությանը ոչ վերաբերելի դիմումներ</i>

Աղյուսակ 4

Չափորոշիչի նկարագրությունը	
Չափորոշիչի անվանումը (հապավումը)	<i>Դրական լուծում ստացած դիմում-բողոքների քանակն՝ ըստ անձանց</i>
Կիրառման ոլորտ/տարածքը	<i>Մարդու իրավունքների պաշտպանություն</i>
Սահմանումը	<i>Չափորոշիչի հաշվարկը կատարվում է հիմք ընդունելով անհատական դիմումների քննարկման արդյունքում խախտված իրավունքի վերականգման հետևանքով բողոք ներկայացրած անձանց քանակը</i>
Չափման միավորը	<i>մարդ</i>
Տեսակ/տիպը	<i>միջոցառման արդյունք</i>
Ներկայացման բացվածքը/կառուցվածքը	<i>Դրական լուծում ստացած դիմում-բողոքներ ներկայացրած անձանց հարաբերությունը ընդհանուրին</i>
Տվյալների ստացումը	
Տվյալների հավաքագրման մեթոդը	<i>Անհատական դիմումների քննարկման արդյունքում պատկան մարմիններից ստացված պատասխանների, բողոք ներկայացրած անձանց գրավոր դիմումների հիման վրա, որն ամբողջովին ամփոփվում է Աշխատակազմում գործող «Mulberry» էլեկտրոնային կառավարման համակարգում:</i>
Տվյալների հավաքագրման հաճախականությունը կամ ժամկետները	<i>Շարունակական, ամենօրյա կտրվածքով</i>
Պատասխանատու միավորը	<i>«Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ</i>
Տվյալների ստացման հետ	

2025-2027թթ պետական ՄԺԾԾ և 2025թ պետական բյուջեի նախագծիերի մշակման բյուջետային հայրերի կազմման և ներկայացման մեթոդական ցուցումներ

կապված ծախսերի գնահատական	
Այլ նշումներ	
Ցուցանիշի ելակետային տվյալը	<i>Դիմում-բողոքներ ներկայացրած անձանց թիվը</i>
Հենանիշային (benchmark) ցուցանիշները	
Թիրախային ցուցանիշը	<i>Քաղաքացիների իրավունքների առավել արդյունավետ պաշտպանություն</i>
Սահմանափակումները	<i>Պաշտպանի իրավասությանը ոչ վերաբերելի դիմումներ</i>

ՏԵՂԵԿԱՆՔ
ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐԻ

Պետական մարմնի (ԲԳԿ) ղեկավարողի անվանումը՝	105035
Պետական մարմնի (ԲԳԿ) անվանումը՝	ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ

5. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 ԾՐԱԳՐԻ ՆԵՐԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝							
Միջազգային կարգավիճակ՝ «A»							
5.2 ԾՐԱԳՐԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ԹԻՐԱԽԱՅԻՆ ՅՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ՝							
Վերջնական արդյունքի չափորոշիչը			Ցուցանիշը		Ժամկետը		
Մարդու իրավունքների ազգային հաստատությունների համաշխարհային միավորման անկախ հանձնախմբի կողմից Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի հաստատությանը շնորհված ամենաբարձր «A» միջազգային հեղինակավոր կարգավիճակի պահպանում (վերահաստատում)			Միջազգային կարգավիճակ՝ «A»		2024 թ. (Մարդու իրավունքների ազգային հաստատությունների համաշխարհային միավորման անկախ հանձնախմբի կողմից շնորհվող կարգավիճակը վերանայվում է 5 տարին մեկ անգամ: Գնահատման համար ուսումնասիրությունը ներառում է նախորդող 5 տարիների գործունեությունը):		
Միջոցառման քանիք	Միջոցառման անվանումը	Արդյունքի չափորոշիչը	2023	2024	2025	2026	2027
11001	Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության ծառայությունների պրամադրում	Գրավոր և բանավոր դիմում-բողոքների քանակը՝ ըստ իրավական ծառայություն ստացած անձանց	15889	14420	15141	15141	15141
		Թեժ գիծ հեռախոսահամարների ստացված զանգեր, քանակ	9988	11800	12390	12390	12390
		Ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության հարցերին վերաբերող բողոքների քանակը՝ ըստ իրավական ծառայություն ստացած անձանց	96	100	105	105	105
		Երեխաների իրավունքների պաշտպանության հարցերին վերաբերող բողոքների քանակը՝ ըստ իրավական ծառայություն ստացած անձանց	952	870	913	913	913
		Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության հարցերին վերաբերող բողոքների քանակը՝ ըստ իրավական ծառայություն ստացած անձանց	466	540	567	567	567
		Դրական լուծում ստացած դիմում-բողոքների քանակը՝ ըստ իրավական ծառայություն ստացած անձանց	1922	1442	2271	2271	2271
		Ուսումնասիրված դիմում-բողոքների մեջ դրական լուծում ստացած դիմում-բողոքների տեսակարար կշիռը, տոկոս	12	10	15	15	15

Պաշտպանի տարեկան հաղորդման և արտահերթ զեկույցների, ներառյալ՝ Կանխարգելման ազգային մեխանիզմի, Կոնվենցիոն մանդատների ապահովման շրջանակներում զեկույցների, ուսումնասիրությունների և իրավական չափանիշների հրապարակում, հատ	8	6	7	7	7
Կանխարգելման ազգային մեխանիզմի գործառույթի շրջանակներում այցեր ազատությունից զրկման վայրեր, հատ	69	52	55	55	55
Կանխարգելման ազգային մեխանիզմի գործառույթի շրջանակներում քննարկումների, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների հարցերով վերապատրաստման միջոցառումների կազմակերպում և իրականացում, այդ թվում՝ միջազգային միջոցառումներ և փորձի փոխանակում, հատ	86	10	11	11	11
Արագ արձագանքման և բողոքների քննարկման շրջանակներում այցեր, այդ թվում՝ փաստահավաք աշխատանքներ, հատ	399	525	551	551	551
Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների հարցերով իրազեկման աշխատանքների կատարման ուղղությամբ միջոցառումների (այդ թվում՝ երկխոսությունների և հարցազրույցների) հանրայնացում և տարածում, քանակ	3966	900	945	945	945
Երեխաների իրավունքների մասին՝ և՛ Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին՝ ՄԱԿ-ի կոնվենցիաների դրույթների կիրառության մշտադիտարկման նպատակով իրականացվող հարցումներ պետական մարմինների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, երեխաների և հաշմանդամություն ունեցող անձանց շրջանում, քանակ	120	120	126	126	126
Կոնվենցիոն մանդատների ապահովման շրջանակներում իրազեկման միջոցառումներ (այդ թվում՝ դասընթացներ, իրազեկման հանդիպումներ, հարցազրույցներ, տեղեկատվական բնույթի նյութեր), հատ	684	250	262	262	262
Կոնվենցիոն մանդատների ապահովման շրջանակներում մշտադիտարկման նպատակով մամուլի հրապարակումների ամենօրյա ուսումնասիրություն երեխաների և հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներին վերաբերելի խնդիրների բացահայտման նպատակով, քանակ	2100	2000	2100	2100	2100
Մշտադիտարկման այցեր երեխայի խնամքի և պաշտպանության կազմակերպություններ, ուսումնական հաստատություններ, հաշմանդամություն ունեցող անձանց խնամք և աջակցություն տրամադրող հաստատություններ, պետության կողմից պատվիրակված ծառայություններ մատուցող կազմակերպություններ, հատ	44	15	16	16	16
Իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ դիտողությունների և առաջարկությունների, ինչպես նաև անհատական դիմում-բողոքների քննարկման և իրականացված այցերի արդյունքներով օրենսդրական բնույթի առաջարկների ներկայացում, Սահմանադրական դատարանի դիմումների և հատուկ կարծիքների ներկայացում, քանակ	483	175	184	184	184
Պաշտպանին առընթեր հասարակական խորհուրդների նիստեր և աշխատանքային քննարկումներ, հատ	218	45	48	48	48

31001	«Վարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի տեխնիկական հագեցվածության բարելավում»								5	5	5	5
5.4 ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ (հազ.դրամ)՝												
Միջոցառման	Միջոցառման անվանումը	2023	2024	2025	2026	2027						
11001	Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության ծառայությունների տրամադրում	547933.3	583101.3	581920.7	582170.7	583019.9						
11005	Երեխաների և երիտասարդների պաշտպանության բարելավում և մասնակցության խթանում	854.0										
11006	Գենդերային հավասարության խթանում Հայաստանի իրավապահ համակարգում	5437.0										
